


34

Երկրորդ Տարկանչութեան  
Գիրնար



Եր. 1884

№

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. Տ. Ռ. Գ. Ը.

2.

389

ԵՐԿՐՈՐԴ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՐՔ.

I. Երկու երեկոյ:

III. Զբի կաթելի սպասմաժիշտու:

II. Աղքատ մարդկու:

ՄՈՍԿՎԱ.

Ֆ. ԳԵՐԵԿԱ, Չերնիշևսկի պող., հոմ. № 5-й,

1884.



80  
E-89  
ար

Ն. 6


ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. Յ. Ռ. Գ. Ը.

2-

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՐՔ.

I. Երկու երեկոյ:

III. Զբի կաթելի պատմովիմը:



9x  
2003

ՄՊԱԿՈՒԱ.

Типографія О. О. ГЕРВЕКА, Чернишевский пер., домъ № 5-й.

1884.

19922

Дозволено цензурой. С.-Петербургъ, 31 Октября 1884 года.



7359-53  
ex.



ДОЗ. ЦЕНЗ. МОСК. 1884 Г. 5 ДЕК.

ТИП. И СЛОВОЛ. О. ГЕРДЕКА, МОСКВА.

ЧРЧЛЪ ЧРЧЛЪ

## ԵՐԿՈՒ ԵՐԵԿՈՅ

(Կոմ-Թուրլեկայից).



Քամին բերում ու խփում է անձրեւ  
պատուհաններին: Դուրսը մութն է,  
խոնաւ և ցուրտ: Խսկ մաքուր ընդար-  
ձակ սենեակում տաք և խաղաղ է:

Պայծառ վառվում է ջրազր փափուկ  
և մեծ բազմոցի առջև գրած կլոր սեղանի վրայ: Հան-  
դարտ պլառումէ կանթեղը մի մեծ խաչափայտի առաջ, որ  
կախ է տուած անկիւնում բազմոցի վերև: Փղոսկրէ հին  
խտալական շինքի խաչափայտը արդին դեղնել է: Կանթե-  
ղի խաղաղ լցում թեթև և բարակ նշոյներով տարածվում  
է ամբողջ պատկերի վրայ և մեղմ լուսով լուսաւորում  
է խաչուածի զլուխը: Եւ ամբողջ պատկերը պարզ որոշ  
վում է սեւ խաչափայտից:

— Մայրիկ, ասում է վեց տարեկան գանգրահեր մանուկը  
մօրը, որ նստած բազմոցի վրայ արագ գործում է մի եր-  
կար և տաք զգի փաթաթան,— մայրիկ, այս Վրիստոսը  
չէ խաչուած:

— Այո, Վրիստոսն է — և կիսատ յետ է նայում խա-  
չուածին ու նորից ընկղմում աշխատանքի մէջ:



— Ի՞նչպէս թէ, խաջուած է, պատմիր, մայրիկ, ինչ կը-  
նշանակէ խաջուած:

— Արնշանակէ, որ նորան մեխել են խաջածեւ փայտի վրայ:  
— Ի՞նչպէս թէ մեխել են:

— Այնպէս: — Մայրը թողնում է գործը, բռնում է  
երեխայի ձեռքիցն ու ասում: Նորա ձեռքերը ահա այսպէս  
դրեցին խաջափայտի վրայ և ամէն մի ձեռքում մրճով մի  
մեխ խփեցին, մեխերը ծակեցին ձեռքերը և մտան փայտի  
մէջ: Յետոյ գարսեցին նորա ոտները և մի մեծ մեխ էլ այն-  
տեղ խփեցին փայտի մէջ, խաչափայտը խրեցին հողը  
և նա ամբողջ օրը կախած մնաց, մինչև որ մեռաւ: Երե-  
խան գունաթափուեցաւ, նորա զգայուն և գիւրմբանող  
երեակայութիւնը կինդանի կերպով նկարագրեց ահռելի և  
արիւնահեղ նահատակութեան բոլոր սարսափը:

— Մայրիկ, նա շատ ցաւ կըզգար, չէ, հարցրեց երե-  
խան, աշխատելով չհաւատալիւր տպաւորութեանը, — ան-  
տանելի ցաւ կըզգար:

— Այս, շատ, շատ:

— Ինչու համար նորան այսպէս արեցին. միթէ նա չար  
մարդ էր:

— Ու նա շատ բարի էր, շատ. բարի էր նա բոլոր  
մարդկանցից որոնք եղել են աշխարհում և երբ և իցէ  
կը լինին, որովհետեւ նա ու միայն մարդ էր, այլ և Աստուած:

— Ինչու ապա նորան սպանեցին:

— Նորա համար, որ նա բոլորին բարի էր ցանկանում  
և ասում էր, որ նորա մայրը, Աստուած, բարի է և իրան

ուղարկել է աշխարհ, որ բոլորը իմանան նորա բարութիւնը:  
Եւ նա շատ բարի գործ կատարեց և շատ մարդիկ միշտ  
շրջում էին նորա հետ: Խակ չարերը նախանձում էին նորան:  
‘Նա մերկայնում էր նոցա սառութիւնը, նախանձը և չար  
գործիրը: Ահա այս բոլոր բաների համար նորան կալանա-  
ւորեցին և սպանեցին:

— Եւ սորա համար նրանց ոչինչ չարիցին: . . . Երե-  
խայի երեսը խփեցն կարմրեց և արտասունքները փայլեցին  
աչքերում: . . . Նո նրանց բոլորին կը մեխէի ծառերից: Եւ  
նա իւր փոքրիկ ձեռքերով բռունցք էր ցոյց տալիս:

— Ի՞նչ կը մեխէիր, ասում է մայրը: Դու շատ վատ  
կ'անէիր:

Երբէք չէ հարկաւոր չարութեամբ հատուցանել: Եյս  
ասում էր Վրիսառոս և երբոր խաջում էին նորան, թէ-  
պէտ սասարիկ ինքը տանջվում էր, բայց էլի մեռնեխս նա  
աղօթում էր իւր խաջոների համար, որովհետեւ նա սի-  
րում էր բոլոր մարդիներին, բարիներին էլ, չարերին էլ:

Չէ որ ոչ մի չար մարդ չար չէր լինել իթէ նորա շուրջը  
չար բան չիներ և իթէ ինքը չկարողանար չարութիւն  
անել: Երեխան երկար նայում էր խաջուածի վրայ, նորա  
խոնարհած գլխին, նորա տանջանքից այլաբեկուած դէմքին,  
նորա կիսաբաց շրթունքներին, որոնք, կարծես, աղօթք էին  
մըմնջում ու կըմնում նորա դէպի մարդիկ ունեցած սիրոյ  
մի և նոյն նշանաւոր խօսքը:

— Մայրիկ, ասաց նա վերջապէս, ևս բարի կը լինեմ,  
բոլորին կը սիրեմ, բարիներին էլ չարերին էլ:

— Այս, բարի եղեմ, որդիս, սիրիր բոլոր մարդկանց:— Եթէ սիրես բոլորին, գուշաւ կըսովորես, որովհետև միմայն նա, ով շատ զիտէ, կարող է բոլոր մարդկանց շատ բարիք անել և նա ծշմարտապէս սիրումէ, բոլորին: Եւ մայրը թափանցիկ հայեացքով նայեց նորա վրայ, ճակատից յետ գցեց գանգուր մազերը և համբուրեց այս փոքր բայց լայն և սուր ճակատը:

Գուցէ, մտածեց մայրը, քո մէջ զարդանայ ուսման և ծշմարտութեան սէր բոլոր մարդիկների օգտի և բարիքների համար: Գուցէ նա նշմարեց քեզ և ներշնչեց այս վնեմ սէրը: Եւ նա խաղաղ և մունջ աղօթքով նայեց խաչուածի վրայ: Հանդարտ պլառում է կանթեղը: Լոյս է, տաք և խաղաղ մեծ սենեակը: Խոկքամին բերումու խփումէ անձրւեր պատուհաններին: Դուրսը մութն, խոնաւ և ցուլտ է:



Մնցաւ համարես մի ամբողջ դար, մարդկային մի խամբողջ երկար կեանք, լի անընդհատ և ծանր աշխատանքներով:

Եթէ երեկոյ է, քամին բերում ու խփում է անձրւեր պատուհաններին:

Դուրսը մութն է, խոնաւ և ցուլտ:

Մեծ բազմոցի վրայ, ընդարձակ սենեակում, պարկած էր հիւանդու և զառամած մեռնող ծերունին: Այս մութն

և փոշիով ծածկուած սենեակում ամէն բան տարօրինակ էր: Ռազի աղօտ լոյսը հազիւհազ լուսաւորում էր նորա անկիւնները և զանազան տեղերում թափոտած առարկաները: Պատրհաններում (ԾԵԽՆՈՅ ՌԿԱՓԵ) յատակից մինչև առաստաղ գլուխ էին շարած, սեղանի, բազմոցի, յատակի և շարքերի վրայ նոյնպէս գիվուած էր պատուտուած, կիսաբաց և ցրուած գլուխ մի կոյտ զանազան գործիքներ, մեքենաներ և գիտնական կարեւոր առարկաներ:

Եւ նոցա փոշին ոչ ոք չէ սրբում,  
Վյլ որդը նոցա ուտում է, մաշում:

Այս, այս գիտնականի սենեակ էր և ինքը նորա տէրը այսակը պարկած էր մի հին, բայց փափուկ բազմոցի վրայ: Նա հազիւ շարժվում էր:

Նա գիտէր, որ իւր օրերը հաշուած են արդէն և նորա առողջ ու հասաւատ մոքի մէջ, նորա ուժեղ ու պայծառ յիշողութեան մէջ, կարծես, ինքն իրեն պատկերանում էր յուզմունքներով և գժուաբութիւններով լի կեանքի ընդարձակ տեսարանը: Նա երես առ երես թերթում էր անցեալ պատմութիւնը: Նա մինտում էր անցեալ կեանքի արգասիքը և որքան աւելի էր մինտում, այնքան աւելի յուղվում էր նորա գունատ գէմքը:

Ահա գիտնին թափած զանազան գիտնական պատուաւոր կոչումների և վկայաթղթերի մի ամբողջ կապոց:

— Ունայնութիւն ունայնութեան և ամենայն ինչ ընդունայն է, շնչում է ծերունին. — ազնիւ միցումն: Զնչին

խաղալիքներ, որոնցով աշխարհը ուզում է ցոյց տալ իւր յարգանքը դէպի մեզ և զուարձացնում է թէ իրան և թէ մեզ ինչպէս մի երեխայի: Ահա նորա յիշատակարանների մի երկար շարք և որդան նրանց մէջ փաստեր և դիւտեր են ժողոված:

— Ձեմն բանել են, չնչին, շընչում է ծերունին: Եւ նորա առաջ, ասես, բացվում են մասնագիտական նրբութիւնների մի ամբողջ շարք, որոնց նա սիրով ուսումնասիրում էր և նկարագրում նցյնպիսի զուարձութեամբ: Եւ այս բոլոր ծանր աշխատանքներից և ոչ մի արդասիք: Բոլոր անցնում է փոքր և մանրագիտական փաստերի շարքով:

— Զէ որ այս բոլորը վսեմ գիտութեան համար է, — երբ և իցէ այս բոլորը հարկաւոր կը լինի, նորից շնչում է ծերունին: Այս բոլորը քեզ համար է, սուրբ ճշմարտութիւն, որին միշտ պիտի ձգտէ մարդկութիւնը:

Այս բոլորը քոնն է, ով վսեմ ինքնանաշութիւն:

Եւ ծերունու դէմքը խաղաղ ու բերկաւից արտայայտութիւն է ստանում, նորա աշքերը փայլում են և շըմունքները աղօթքի պէս մի բան են մրժիցնում և յանկարծ նորա երեսի վրայ երկիւղ և տանջանք երևեցաւ:

Օկրունին բարձրացաւ տեղից, նա ուղիղ դէպի մի անկիւնն էր նայում:

Վի բան փայլում է այնտեղ: Վի գունատ, շատ գունատ գլուխ երեւում է ժողովուած զրբերի և մէքենաների լժակների միջից: Օկրունին ձանաշեց այս զլուխը: Վաղուց անցած մանկական հեռաւոր օրերի մի պատկեր պարզ

նկարուեցաւ նորա յիշողութեան մէջ: Եհա նստած է նորա մայրը նոյն իսկ մեծ և փափուկ բազմոցի վրայ, որտեղ ինքը այժմ մահուան ըոպէում հիւանդ պարկած է: Եհա նայում է նա նոյն խաջուածի զլինն, որին նայում է և այժմ:

— Վայրիկ, մտաբերում է նա, այս Քրիստոսը չէ խաչուած:

— Այս Քրիստոսն է, պատասխանում է մայրը: Վիայն նա ... յիշում է ծերունին, ... միայն նա, ով շատ գիտէ, շատ բարիք կարող է անել մարդկանց և նա միայն ճշմարտապէս սիրում է բոլորին: — Ինչպիսի պարզ և վսեմ խօսքեր: Վիթէ երբ և իցէ սոքա հնչել են իմ սրտում:

Օկրունին ցնցուեցաւ: Նա կրկնի աչք ածեց սենեակի շորս կողմը: Գրքեր, զրքեր, անվերջ զրքեր:

— Չեղանից և ոչ մէկը սիրոյ վսեմ խօսքը շասաց ինձ: — Ոչ մէկը ցոյց շտուեց ինձ սուրբ և յաւիտենական նպատակը:

— Ոհ, ինչ կարող ենք անել մենք և ամբողջ մարդկութիւնը մեր բոլոր զիտեցած փաստերի ընդարձակ ազատութեամբ, եթէ մեր մէջ սէր չլինի:

— Դու ճշմարտութիւն երբ սիրում միսիթարում էր նորան ներքին ձայնը: Վանդ աշխատանքները նշանաւոր գործեր են գատնում:

Վմէն մի մարդ թող գնայ, ուր նորան տանում են իւր բնածին կամ ստայած հակումները: Վլուխը ձեռքերի վրայ խոնարհած նա երկար ժամանակ նստած մնաց: Յետոյ տեղից յանկարծ բարձրացաւ: Կամաց վեր կացաւ բազմոցի վրայից, հազիւհազ քայլերը փոխելով և տատանուելով

մօտեցաւ և գողգոջուն ձեռքերով հանեց խաչափայտը սապատից (Կօրչինա), որի մէջ հաւաքած կային զանազան անպէտք բաներ: Արբեց նորա փոշին և սիրով սկսեց նայել այս սքանչելի գեղարուեստական դործի վրայ: “Նորա մէջ գեղեցկութեան և զգացմունքի դօրութիւնը միացած էր անբաժան:

— Այո, միմիայն դու գիտէիր սիրել մարդուն, շընչեց ծերունին, — սիրել անձնուիրաբար, անկեղծ և բերկրաից հաւատով:

“Նորա աչքերը մթնեցան, սրտի զարկը սկսեց թուլանալ: — Դու չեիր միայն, մրմինջալով ասաց նա, որ գիտէիր թէ ինչն է վսիմ այս մթին և խորհրդաւոր աշխարհում, — ինչն է վսիմ. Ճշմարտութեան սէրը, թէ սէրը գէպի մարդք:

“Նորա գլուխը հանդարտ խոնարհեցաւ փոշոտած արկղի վրայ, նորա ձեռքերը ամուր սեղմեցին խաչափայտը և սառեցան: Արտի բարախումը կանգնեցաւ, ուղեղը զադարեց գործելուց: Վազվան քամին բաց արեց լուսամուտը և հանգցրեց ճրազը: . . .”



## ԱՂՔԱՏ ՄԱՐԴԻԿ

(Վեսելիստակայա)



**Փ**ոթորկալեց գիշեր է: Զինորսի աղքատ խրձիթում, կրակի առաջ՝ նստած է ձաննին և կարկատում է հին կոշտ կտաւէ առազասար: “Նա լսում է ինչպէս քամին սուլում է ու գվազում, ինչպէս անձրեր լուսամուտն է ծեծում, ինչպէս մանջում են ալիքները՝ ծփծր-փալով ու ափին զարնուելով: . . .”

Դուրսը մութն է, ցուրտ է, տխուր. ձկնորսի աղքատ խրձիթը տաք է և ուրախ: Հողի յատակը մաքուր աւելած է, վառարանում ձթձթում է խուրուխուշն ու կրակը բոցավառովում. թարեքումը շարած են յստակ լուսցած ամանները: Աենեակի խորքումը դրած է մի մաշճակալ՝ սպիտակ վարագուրով ծածկած, իսկ գետնին փռած մեծ գոշակի վրայ քաղցր քուն են մտած հինգ փոքրիկ մանուկներ որոնց օրոր. է ասում ովկիանոսը: Ձաննին նստած է կրակի առաջին և կարկատում է հին առազասար: “Նորա մարդը այժմ ծովումն է, նա գնացել է ձուկ բոնելու:

Արսափելի է այսպիսի մութը, ցուրտ, անպիտան զիշեր ծով գուրս գալը, բայց ի՞նչ արած. հօ չէ կարելը

թողնել որ ընտանիքը մուրացիանութեամբ ապրի: Մանկութիւնից արդէն նա սովոր է ովկիանոսին, մանկութիւնից նա բացի ձկնորսութիւնը ուրիշ ոնչով պարապած չէ: և թէպէտ զարհուրելի է, կամայական ովկիանոսը, բայց կրկին սա է որ կերակրում է թէ նորան, թէ մաննին և թէ այս դոշակի վրայ պարկած բոլոր մանուկներին:

Հատ ծանր է ձկնորսի գործը: Եղանակը լաւ լինի թէ վատ՝ նա ամենայն երեկոյ պէտք է իր փոքրիկ նաւակովը դնայ բաղդ ինդրելու ծովում: Նա ամէն մի տեղ պիտի լաւ ճանաչէ: — Եշա և յանդուզն ձկնորսը մօտենում է ժայռերին: Ասոր կանաչ ալիքները բարձրանում են նորա շուրջը մի կողմից միւս կողմը ձգելով սուզուող նաւակը. Ծրի փոշին զարկում է նորա երեսին, շուաններն ու կայմերը ձուլն շում են, քամին ուռցնում ու այնում է դորշ առագաստները:

Իսկ մաննին նատած է տանը, կարկատում է պատրոտուած ուռկանները և հին առագաստները, կերակուր է եփում ընթրիքի համար. յետոյ կերակրելով ու քուն դնելով երեսաներին, երկար ժամանակ աղօթում է: ...

Եւ լսում է նա ովկիանոսի խուլ հառաջն ու հողմի գոռոցը. երբեմն միայն դալս է հեռուից ձկնակուլու բարակ ձայնը: Ժաննին զարհուրում է. նորա երեսակայութիւնը նկարում է նաւաբեկութեան սոսկալի տեսարաններ. ժայռերին զարնուած ջարդուած նաւ, խեղդուող նաւատիներ: ... Արսափելի է:

Հին փայտէ ժամացոյցը փացուած ձայնով հանդարս զարկում է. չիկ-չըկ, չիկ-չըկ... երեսաները քնած են:

Ժաննին մոտածմունքի մէջ է ընկնում: Այս, հետ չողա համար ապրելը: Մարդը՝ իրան չխնայելով ցրտերին ու փոթորիկներին, գնում է ծովը, ենթարկում է իրան հազար ու մի վտանգի: Իսկ ինքը՝ տանը նստած, առաւտուանից մինչև երեկոյ աշխատում է:

Եւ ի՞նչ են վաստակում խեղջնըր: Փոքրիկ մանուկները ամառ ձմեռ բորիկ են ման գալխ, ցորենի հաց մաքներովն անգամ չէ անց կինում: Շիշու է երբեմն ձուկն էլ է լինում: գեռ փառք Աստուծոյ որ երեխանները առողջ են. իսկ եթէ, Տէր մի արացէ, նոցանից մեկը հիւսնդանայ՝ այն ժամանակը... Ո՛չ, Աստուած իմ, ի՞նչպէս գոռում է ովկիանուար, ինչպէս սուլում է քամին: Ո՞ւր է նա հիմայ արդեօք: Ո՞ւր է իմ խեղջ մարդը: Պահպանիր նորան, Աստուած, փրկիր, ողորմիր մեզ:

Ժաննին աւելի և աւելի սկսում է վախենալ. նորա մարդը այս մութը փոթորկալց գիշերին բոլորովին մենակ ընդարձակ ծովումն է: Նա օգնականներ չունի. երեխանները գեռ փոքր են: Խեղջ ժաննի, գու քեզ խաբում ես ասելով թէ Այ, եթէ տոքա մեծ լինէին, կ'օգնէին իրանց հօրը: — Այդպէս մի խօսիլ կը մեծանան, կ'երթան իրանց հօր հետ և գու լաց լինելով կ'ասես. Այս, եթէ նոքա փոքր լինէին ու ինձ հետ տանը մնային: Աթափելով մոտածմունքից ժաննին վերկացաւ հաստ վերարկուն ձգեց վրան, վառեց լսալտերը ու փողոց գուրս եկաւ: Նա կամենում էր իմանալ չի վերադառնում է թէ ոչ վան է արդեօք փարոսի լսալտերը:

Առութն է: Իարակ անձրեւ է գալիս: Գիւղըւմ ամէնքան քնած է: Արագները հանդել են: Գիւղի գլխին, ճիշդ ովկիանոսի ափին կայ մի կիսաւեր, ծոռւած սևացած պատերով, փտած դոնով խրճիթ: Դուռը ճռճռում է ու չիչիկում, կարծես հառաջում է քամու ամէն մի փշելուց:

Քամին մանաւանդ այս թշուառ խրճիթի վրայ է յարձակվում, կարծես կամենում է սրբել գետնի երեսից. իսկ դուռը հառանջում է, ճռճռում, և փտած յարդը շրջիւն է հանում կտրան վրայ, կարծես դժութիւն է խնդրում: Ճաննին կանգնեցաւ խրճիթի շեմքումը և ներս նայեց ծռուած լուսամուտից: Խրճիթը մութն է: «Հարկաւոր է տեսնել խեղճ հիւանդ կնոջը, մտածեց Ճաննին: «Նս ամենեին մոռացել էինուրան: Մարդս ասումել որ նա երէկ աւելի վատ դրութեան էր: Եւ իրաւ որ խեղճը մեն մենակ է. ոչ ոք նորան նայող չկայ»: Ճաննին դուռը ծեծեց. նա ականջ է դնում... Կամէն ինչ լուռ է. ոչ ոք չէ պատասխանում: «Խեղճ կին, մտածում է Ճաննին շեմքումը կանգնած. շատ դժուար բան է, երբ ինքը տուն պահողը հիւանդանում է: Դիցուք նա միայն երկու երեխայ ունի. բայց չ նա այրի է և տան բոլոր հոգսերն ու չարչարանքը նա մենակ է քաշում: Եւ այս սե օրին հիւագութիւն:... Ե՞շ, խղճուկ, խղճուկ:»

Դա կրկն և կրկն դուռը ծեծեց: Դարձեալ պատասխան չկայ:

— Եյ, հարեան, կանչեց Ճաննին ու մտածեց. «ի՞նչ խոր քուն է եղել զարթեցնելու հնար ել չկայ»:

Քամին առաջուան պէս սուլում է, Ճաննին արդէն ցրտիցն ու խոնաւութիւնից դողդողում է:

Դա կամենում է ալոդէն դառնալ տուն, յանկարծ սաստիկ փշեց քամին որ փոքր էր մնացել պէտք է թռցնէր նոցա վրայից վերարկուն, շարժուեցաւ հին դուռն ու ճռճռալով բացուեցաւ նորա առաջին:

Ճաննին ներա մոսաւ: «Որա լապտերը լուսաւորեց մըռոյը լուռ խրճիթը: Կյատեղ նոյնպէս խոնաւ է ու ցուրտ, ինչպէս և դուրսը. երկում է որ մենեակը վաղուց է վառած չէ. կտրիցը բարակ անձրեւ է մաղում: Պատին մօտ, ուղեղ դրան դիմացը, մի կցյա յարդի վրայ ընկած է մեռած այրիի դիակը: Գլուխը յետ է ձգած. սառը կապուտած դէմքը, բաց շրթունքներով արտայայտումէ մի տեսակ սարասփ և յուսահատութիւն... Գունաստ ձեռքը որ կարծես թէ մէկ բանի է մեխած, կախ է ընկել յարդի կցյաի վրայից: Խրկու քայլ մօր դիակիցն հեռու մի անշուք օրորոցում երկու փոքրիկ տղայ, թէև գունատուած, բայց դանգուր մագերով ու լիքը թշերով, կուչ եկած ու շիկահեր զլիներն իրար կացրած, խոր ու անվրդով քուն ևն մտել առանց որ և է ուշագրութիւն դարձնելու մահուան մօտ լինելուն ու փոթորկի գոռոցին: Մայրը մեռնելուց առաջ կարողացել է մի մեծ հին թաշկինակով փաթաթել նոցա ոտները և ծածկել նոցա իւր հագուստովը որ ցուրտ ու խոնաւութիւն չզգան: Մէկը թշի տակն է զրել փոքրիկ թիվեկ ձեռքը, միւսը դէմ է արել երեսը եղօր վկին: Նոցա շնչառութիւնը կանոնաւոր է և հանդիսաւ. թւում է թէ նոքա այնպէս քաղցր ու խորը քնած են որ ոչինչ նոցա զարթեցնել չէ կարող: Եսկ հողմը դեռ չէ դադարում,

սուլում է, գոռում: Հապլու երբեմն անձրևի մի կաթիլ անցնում է կտորից և կաթում է հանգուցեալ կնոջ ճա- կատին, զլորվում է սառը թշի վրայ, իրևե մի կաթիլ ար- տասուք նորա մաշուած տանջուած երեսին...:

Ժաննին շտապով տուն է վազում: ‘Նա վերարկուի տա- կին մի բան է տանում: ‘Նորա սիրտը սաստիկ զարկում է. նա չէ համարձակում յիտ նայել կարծես թէ մէկը վաղում է նորա յետելից: Երդեօք նա բան չէ դողացել այն հան- դուցեալ կնոջիցը:

Տուն հանելով նա իւր բեռը գնում է մահճակալի վրայ և շտապովքաշում է վարագօյլը:

Յետոյ նա առնում է աթոռը, գնում է մահճակալի մօտ և նստում է զլխավերելը: ‘Նա գունատ է և յուզուած: Կարծես մի բան նորան տանջում է, խիզը մի բանի համար յանդիմանում է նորան: Գլուխը խոնարհած հառաշում է նա և մէկ մէկ բայցանչում: «Խեղճ մարդա... Խնչ կ'ասէ նա, ևս այս ի՞նչ արի: Հանաք բան է — հինգ հոդի հինց մեր ձուտիկներն են — կարծես քիչ հոգս ուներ դոցա ձեռին... Նա է... Ոչ ոչ գեռ... Եւ ինչու ևս վեր առայ... Եթէ սո- րա համար ծեծէ էլ ինձ տեղն է. այդպէս էլ պէտք է...: Եհա՛ րա համար ծեծէ էլ ինձ տեղն է. այդպէս սառը է... Ոչ... Փառք Աստուծոյ...»:

Դրուը չխկաց, կարծես մէկը ներս մտաւ: Ժաննին դո- ղաց ու աթուի վրայից վեր կացաւ:

Ոչ, կրկին ոչ ոք չկաց: — Ժաննին երկար նստած է մահ- ճակալի մօտ և լուռ ու մունջ մտածում է: Անձրեւ կտրել է. լուսանում է, բայց քամին փշում և ովկիանոսը դուռում է

առաջուան պէս: Յանկարծ գուռը բացուեցաւ, սենեակը մի թարմ ծովային օդ անցաւ և տուն մտաւ բարձրահասակ թխաղէմ ձկնորսը, պատուածուած թաց ուսկանը քաշ տալով:

— Եհա և ես, Ժաննի:

— Եհ, գուռ ես, գոչում է Ժաննին, գրկում նորան ու կանգնում, չհամարձակելով աչքերը նորա վրայ ուղղել:

— Եհ, Ժաննի, անպիտան բան է, սիրելի ս: Եյ գիշեր. սարսափելու է....

— Եյ, այն, եղանակը դարշելի էր: Իսկ ի՞նչ ես որացել:

— Ոչի՞նչ ամենեւին ոչի՞նչ: Միայն ցանցը պատուեցի: Վատ է, շատ վատ է... Եշապէս էլ եղանակ... կարծեմ այսպիսի գիշեր երբէք ինձ չէ պատահել: Հողմը դեկի պէս մնեցում էր, խաղացնում էր նստակս իբրև մի գնտակ: Բո- պէ էր լինում որ կարծում էի թէ սրարանը կտրուել է և նս- տակը գնում է դէպի յատակը: Ի՞նչ որս, փառք Եստուծոյ որ կինդանի տուն հասայ... Դու ի՞նչ էիր անում առանց ինձ, շարունակեց ձկնորսը սենեակը քաշելով ուռկանը և տաքսնալով վառարանի առաջին:

— Ես, սաց Ժաննին երեսի գոյնը քցելով, ի՞նչ պէտք է անէի... Նստած կար էի անում... Քամին այնպէս սաս- տիկ պվապացնում էր որ վախենում էի: Երկիւղ էի կրում քեղ համար:

— Եյ, այն, վիճիպնթաց մարդք. սատանայի եղանակ է, բայց ի՞նչ արած:

Երկումն էլ լուցին:



Յետոյ Ժաննին անհամարձակ, դողդողալով ու երկշոտ,  
իբրև յանցաւոր, ասաց:

— Հա, զիտի՞ս, մեր գրացի Ախմօնի կինը մեռել է: Զգի-  
տեմ ելք, երևի երէի քո նորա մօտը գնալուց յետոյ: Խե՞զ՞  
կին: Դժուար է եղել երևի մեռնել այնպիսի թշուառ կացու-  
թեան մէջ: Տեսնես ի՞նչպէս ցաւել է նորա սիրտը երեխա-  
ների համար: Եխար նա երկու փոքրիկ տղայ է թողել իրա-  
նից յետոյ... Մէկը գեռ չէ խօսում, իսկ միւսը նոր սկսում  
է չօչ անել...

Ժաննին լոեց: Ձկնորսը կնճռեց դէմքը. նորա բարի, բայ  
հայեացքը ընդունեց մի ծանր խոհական արտայայտութիւն:

— Այ քեզ բան — ասաց նա վերջապէս ծործորակը քո-  
րելով: Ե՞հ, եղաւ չեղաւ. թող հինգ չը լինի, եօթը լինի. Հօ  
չէ կարելի նոցա դէն քցել: Ի՞այց ի՞նչպէս պէտք է կառավա-  
րուենք. հիմայ իսկ դժուար է: Ե՞հ, ի՞նչ արած: Երեխաները  
շատ փոքրիկ են, ինչպէս կարող են իրանք իրանց գլուխը  
պահել... Գիտե՞ս, ի՞նչ է, Ժաննի: Վնա՛ շուտով նոցա այս-  
տեղընք: Եթէ նոքա զարթել են, երևի շատ պիտի վախե-  
նան մեռեալից: Ասում ես ի՞նչպէս է քսմին դուռը ծեծում:  
դա նոցս հանդուցեալ մայրն է: Մէր խնամքի տակ առնենք  
նորա որդոցը: Նոքա կ'ընկերանան մերմոց հետ և նոցա  
հետ հարազատ եղքօր պէս կ'ապրեն: Տօն օրերի երեկոները  
աւելի աղմկալից ու ուրախ կ'անցնին մեր տանը, քան թէ  
առաջ: Նոքա կըզուալձանան, խաղ կ'անեն, իմ ծնկների  
վրայ կ'ենեն մերոնց հետ: Իսկ երբ Աստուած տեսնէ որ  
երկու մանուկ այլ ես պէտք է պահել, կերակրել, ինձ յաջո-  
ղակ որս կը տայ:

Շուտա կ'երթամ, աւելի շատ կըմնամ ծովումը, գինի չեմ  
խմի... Ե՞հ, ինչպէս որ լինի՝ մի կերպ կ'ապրենք: Վնա՛  
շուտով: — Ի՞այց Ժաննին տեղեցը չէր շարժվում:

— Ի՞նչ է, տժգնէ ես. չես ուզում նոցա ընդունել: Ի՞նչ է  
եղելքեղ Ժաննի:

Ջաննին՝ բաղդասար, ուրախ, մարդուն անխօս տարաւ  
մահմակալի մօտ և վարագոյը յետ քաշեց....:

Այնտեղ պարկած էին մեռած գրացի կնոջ մանուկները  
և քնած էին առաջուան պէս խաղաղ ու անվրդով:



## ԶՐԻ ԿԱԹԻԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ԴՐԱԿԵ) .



այնատարած ծովի ծոցում պարզ արեգակի ճառագայթների տակ թռչկոտում էին հաղարաւոր փոքր կաթիներ, իրուև զուարթ երեսներ իրանց մօր ձեռքի և տարուբեր վումէին այս և այն կողմը մեղմ քամու փշելուցը: Եյս խմբերի մէջ մի կաթիլ առաւել խաղասէր և վառվառն էր և աշխատում էր նոցանից բարձր թռչել բայց ինչպէս և իւր ընկերները մեր կաթիլ կրկին և կրկին ծովն էր ընկնում: Երբեմն նա կարողանում էր ձկան թեւի վրայ ընկնել նորա հետ պարելով մեր կաթիլ անցնում էր մի որոշ բարձրութիւն, բայց չը կարողանում ձկնից աւել թռչել և ցած էր ընկնում նորա հետ. կարծես թէ թելով կապած լիներ, մինչև այն աստիճան նորան քաշում էր ջուրը: Երբոր նա կրկին թռչում էր ջրի վրայից կապոյտ երկնքի տակը, որ մի այլ ովկիանոսի նման տարածուած էր ծովի վրայ և ուր խաղում էր պայծառ արեգակը, նորա սրտում ծագում էր մի անմենելի փափագ - բարձրանալ օդը մինչև ամպերը, ճանապարհորդել նոցա հետ կապոյտ օդային ծովի մէջ և վերելից նայել երկրի վրայ: Եւ աշա սկսեց կաթիլ

աղաչել և պաղատել որ արեգակը բարձրացնէ նորան և թռչույթ իւր հետ ճանապարհորդել երկրի շուրջը: Երեգակը հաւանեց նորա համարձակութեանը և կատարեց կաթիլի խնդիրքը: «Նա խկըն ցած ուղարկեց իւր ճառագայթներից մի քանիսը և նոքա մի վայրկենում հասան ծովը, որ կաթիլը օդը բարձրացնեն: Երեգակի ճառագայթները այս կաթիլի հետ բարձրացրին ուրիշ շատերին, թէպէտ և նա ընկատեց, որովհետեւ այս բոլոր ջրային հասարակութիւնը արեգակը գոլորշի էր դարձրել, որ աննկատելի է մնում աշքի համար, այս էր պատճառը, որ ծովն էլ ընկատեց, ինչպէս արեգակը խլեց տարաւ իրանից փոքր կաթիների մի բազմութիւն: Աստիկ արագութեամբ բոլոր կաթիները շտապումէին համնել արեգակին. նոքա առաւել և առաւել էին բարձրանում: Եւ աւականին բարձրանալով նոքա օդային հոսանքի ազդեցութեան ներքոյ ընկան, որովհետեւ օդի մէջ էլ կան գետեր և առուներ, զանազանութիւնը միայն նորանումն է, որ նոքա ջրային չեն, այլ օդային: Կաթիները այդ օդային հոսանքի մէջ ընկան և նորա հետ գնացին հեռացան ծովից գէպի գետինը: Ինչպէս հմուտ լուզորդներ նոքա շատ շուտ անցան հարիւր մղն: Կաթիները շատ ուրախ էին, որ այս հոսանքի մէջ էին ընկել որովհետեւ դորս մէջ առաւել շուտ էին լող տալիս ձկներից և աւելի շուտ թռչում թռչուններից: Հատ էր նոցա զարմանքը, երբ առաջները ցածումը բացուեցաւ մի բոլորովին նոր և անցայտ աշխարհ: «Նոքա տեսան ցածում կանաչ մարգագետիններ, տատանուող արտեր, ծառեր և թփեր, քաղաքներ և դիւզեր:

Խնչպէս արեգակը տեսնում է ամենայն բան որ կատարվում է երկրի վրայ, այնպէս էլ կաթիլները ստացել էին այնպիսի պայծառատես աչեր, որ նորա էլ ամենայն բան տեսնում էին: «Նոյա համար ամենայն մի բան նոր էր երեւում և մինչեւ զարմացած նայում էին, չնկատեցին անդամինչպէս արեգակը իջնում էր երմկի վրայից: Աշա վերջապէս նա մտաւ ծովը և այնտեղ որտեղից մեր կաթիլները սկսել էին իւրեանց ձանապարհորդութիւնը: Վյատեղ բարձր օդային շերտեկում մեր ուրախ և խաղասէր կաթիլը իրան լաւ չէր զգում, նա մանաւանդ երբ սկսեց այնտեղ ցրտել և մթնանալ: Խեղձ՝ կաթիլը աչերը այս և այն կողմը ձգեց օթեան որոնելու, բայց մի այդպիսի բան չէր կարելի գտնել ամայի օդային դաշտերում: Վյո տեսնելով նա լաւ համարեց օթեանել երկրի վրայ, որ գգուանքով զրաւում էր նորան իւր մարգերով, ծառերով և ծաղեկներով: Վսելն ու անելը մէկ եղաւ:

♦անդարտ և աննկատելի մեր կաթիլը սկսեց ցած իջնել: Ուրան նա շատ էր ցածանում, այնքան էլ ծանրանում էր, նա զգում էր, որ ինքը — անտեսանելի գոլրըշի — ջրի կաթիլ էր դառնում: Մեր կաթիլը իջնում էր առաւել և առաւել արագ և հասաւ վերջապէս վարդի թփին: «Նոր բացուած կոկոնը սիրով բացեց իւր դուռը և մի վայրիկանում նորա մէջ ընկաւ կաթիլը կանաչ տնակում նորա համար պատրաստած էր անուշահոտ անկողին: Երբ միւս օրը շող շողաց արշալոյսը զարթեցաւ մեր կաթիլը և մնաց զարմացած, տեսնելով որ քնած է եղել վարդի թերթիկների վրայ,

որոնք փայլում էին առաւտեան շոլերի նման: Ուրախ և զուարժ նա թողեց իւր անուշահոտ անկողինը և նստեց ծաղկի թերթիկի ծայրին: Երբ փառաւոր արեգակը երևեցաւ երկնակամարի վրայ, մեր կաթիլը «բարի լցուքեց արեգակ, ասաց, վեր առ ինձ կրկնին հետդ, ես կամենում իմ տեսնել հետու աշխարհներ»: Երեգակը լսեց նորա ինդիւքը ճառագայթները կրկնին տարան նորան գէպի երկինքը և նա ուրախ անցնում էր քաղաքներ, երկիրներ, լեռներ և հովիաներ բայց քանի օրը տաքանում էր և գժուարանում էր չնչառութիւնը, այնքան աւելի արեգակի ուղեկցի շյժերը սպառվում էին և նա կամեցաւ վերջապէս հանդստանալ: Ճանապարհի վրայ չկար ոչ մի վարդ և ոչ մի փոքր ստուեր յոզնած ձանապարհորդի համար: Յոզնելուց մեր կաթիլը քիչ էր մնացել որ լաց լինի և աշա յանկարծ նա բացագանչեց և ասաց բարի արեգակին: «Խող ինձ կրկնին գնամ երկիլը, իմ մօտ մօտ, ծովը»: Խսկըն ինչպէս որ նորա շըթունքից դուրս թռան այս խօսքերը, նա լսեց իւր ըրս կողմը հազարաւոր ձայներ, որ մի և նշյն բանն էին աղաղակում — այդ նորա քոյլեկն էին, որոնք աննկատելի կերպով նորա հետ ձանապարհորդութիւն էին անում երկնապում: Խղճաց բարեկար արեգակը և ուղարկեց սառը քամի, որ հաւաքեց բոլը փոքր կաթիլները և դարձրեց մի սպիտակ ամողիկ, որ անդապար մեծանում էր, քանի որ կաթիլները շատանում էին: Խանձր թխպում կաթիլները սկզբում չէին ձանաշում միմեանց, նորա անդապար կուչ էին գալիս միմեանց մօտ և չէին կարողանում իմանալ թէ ինչպէս պա-

տահեցաւ, որ նոքա յանկարծ խոշոր ջրային կաթիներ դպրձան։ Չեռք ձեռքի տուած նոքա արագ շտապում էին դէպի գետինը։ Երբ այս փոքրիկ զօրքը գետին հասաւ, մարդիկ ծափահարելով աղաղակում էին և ասում։ «անձրեւ է դալիս»։ Կաթիների մի մասը բարձր սարի վրայ ընկաւ, դոցա հետ էր և մեր կաթիլը։ Իարձութիւնից վայր ընկնելը նորան վնաս չըերեց, ուրախ ուրախ թռչոտում էր ոլոր - մոլոր զառիվայրից և նորա ընկերները յետելիցը - ինչպէս զինուորներ զօրավարի յետելիցը։

Ըուտով կրկին հաւաքուեցաւ նոցա մեծ խումբը և բոլորը միմեաց հետ այնպէս մօտ էին թռչոտում, որ շուտով կաղմեցին մի փրկրալից անտառային հեղեղ, որ մանկական աշխոյժով առաջ էր ընթանում։ Երբ նոքա կտան մի սուր և անկիմաւոր քարի, որ յանդուզն կերպով կամենում էր նոցա ձանապարհը կարել նոքա աշխատում էին թռչել նորա վրայից և փոքր զօրավարը միշտ ամենից բարձր էր թռչում։ Եւ այսպէս թռչուսելով մեր կաթիները անցան բաւականին տարածութիւն դէպի ցած, այստեղ նոքա լսեցին մի տարօրինակ ձայն և մօտենալով նորան, տեսան մի տուն։ Տան առաջ կանդած էին երկու շրջանաձև տաշած քար և երկու էշ, որոնց ջուալ էր բարձում մի սպիտակ մարդ։ Տան յետեւում անդադար պտոյտ էր գալիս ակը, որի վրայից խշեշալով անցնում էր առուն։ Ներկեռում ակի օգնութեամբ պտը տուածում էին տան մեծ դրան առաջը դրած քարերի նման մեծ մեծ քարեր և այնպէս շուտ, որ նոցա արագութիւնը առաւել էր քան երեխաների քցած հոլի պտոյտը։

Դոքա ջաղացքարեր էին, որ անդադար ցորենի հատիկները ալիւր էին գարձնում։ Իայց այդ ինչ հսկայ էր, որ պտոյտ էր տալիս ջրաղացի ակը ծանու քարերի հետ։ Այդ մեր ծանօթ կաթիներն էին, որ հաղարներով թռչում էին ակի վրայից և այնպիսի ուժով էին առաջ գնում, որ ակը նոցա առաջ խոնարհում էր։ Խչքան որ փոքր լինին ջրի կաթիւնելը, բայց երբ նոքա միանում էին եղացյաների պէս, նոքա հզօրանում և մեծանում էին։ Մեր կաթիլը իւր ընկերների հետ մեծ թռիչքներ էր անում և երբ նա ցած էր սլանում, այնպէս էր երեւում թէ փրկրալից ջրի յորձանքում պէտք է կորչէր, բայց շուտով նա ջրի մակերեցթի վրայ երեւցաւ և այնպէս զանդաղ էր առաջ գնում, որ կարծես նորան ոչինչ չէր պտատահել։

Իայց ահա եկաւ մի կին գաւաթը ձեռքին բռնած, թեքուեցաւ, առուից ջուր լցրեց և ուրիշ կաթիների հետ վեր առաւ և մերին և տարաւ ու շաղ տուեց սպիտակ վաթանի վրայ, որ փուած էր խոտի վրայ լուանալու համար։ Մեր կաթիլը բոլորովին ցամաք գետնի վրայ դուրս եկաւ և նա այստեղ կը կորչէր անշուշտ, եթէ ժամանակին արեգակը շտեսնէր իւր պայծառ աշերով նորա աննախանձելի գրութիւնը։ Նրեգակը շուտով հեռացյալց նորան իւր ընկերների հետ այնպէս որ ոչ մի հետք անդամ չնաց նորան կաթիների վրայ ահա կրկին զուարթ դէմքով ձախցանից քաթանի վրայ և ահա կրկին զուարթ դէմքով ձախցանից քաթանի վրայ աւել չկամեցաւ իրան ձանձրացնել կաթիներով, կադակը աւել չկամեցաւ իրան ձանձրացնել կաթիներով, կամենալով մի փոքր ժամանակ հանգստութիւն առնել և զագել

մեր փոքր ջրային հելտոսի ճանապարհորդութեան փափազը, ուղարկեց նորան Իւալտիք ծովով լայնատարած հարթ հիւսիսի դաշտավայրերը, որտեղ շատ ցուրտ է: Ճանապարհը շատ էր երկայն և երբ կաթիլը յոդնած, հասաւ հիւսիսի երկինքը, նորա եռանդը հատաւ:

Սուր քամին փչում էր հիւսիսային բևեռից, նա շատ ցըրտայնում էր օդը և հազարաւոր ջրային կաթիլներ կրկին սրիսեցին միանալ, կարծես կամենում էին միանալ միմեանց կողքի կուչ գալով: Իւյց այս անդամ գժուար էր տաքանալ, որովհետեւ արեգակը ցածացել էր հորիզոնի վրայ և նորա ճառագայթները գժուալութեամբ կարողանում էին ցիր ու ցան անել բարձրացած թռուխսը: Աաթիլները արդէն պատրաստ էին գանգատելու իրանց անտանելի զրութեւնից և երբ խորհուրդ էին անում, թէ ինչ անեն, յանկարծ, զարմանալի բան, նոքա մի վայրկեանում իրանց կերպարանքը փոխեցին: Ամէն մէկը կաթիլներից դարձաւ սպիտակ, արծաթէ աստղեկ, զարդարուեցաւ բարակ ասեղներով և թիթեռնիկի թեւերի պէս քնքոյշ աղուամազով և իբրև սպիտակ թիթեռներ ճախրում էին այժմ գէպի գետինը սառուցի աստղիլներ, ուրախ պարելով թռչուտելով մէկը միւսի առաջը կտրելով: Վարդիկ ասում էին. «Ճիւն է գալիս:» Վեր փոքր ճանապարհորդը որ դարձել էր մի ճիւնի հատիկ իւր հազարաւոր ընկերների հետ դաշտն ընկաւ: Խնչպէս տաք ձմերային վերմակ ամենա-լաւ աղուամազեց շնած պարկած էին նոքա դաշտի վրայ և պաշտպանում էին սաստիկ ձմերային ցրտից գետնի մէջ եղած հատիկները և արմատները: Նոքա իրանք չէին զգում

ոչ փայտացնող ձմերային ցրտի աղբեցութիւնը, ոչ անտանելի հիւսիսային հողմը, որ փչում անցնում էր սպիտակ ձիւնի տարածութեան վրայից, նոքա ոչնչէ չին տեսնում և չին լսում, որովհետեւ քնած էին խոր ձմերային քնով: Երեգակը գնաց նոցանից շատ հեռու, բայց և երբեմն նայում էր նոցա վրայ իւր հեռաւոր աշխարհից և կաթիլները սյն ժամանակ պսպղում էին գոհարնեղի պէս և ճառագայթներ էին արձակում, ասես թէ իրանք դարձել էին լուսատու արեգակներ և պայծառ աստղեր: Ճամարեա կէս տարի նոքա ընկղմած էին քնի մէջ: Եւ ահա ընորհատու արեգակը կրկին բարձրացաւ երկնքի վրայ, կրկին սկսեց մօտենալ նոր ցարնան տաք քամին իմաց տուեց նորա գալը: Փոքր կաթիլների խումբը, սպիտակազգեստ անշարժ բանակը ձգած, դաշտի վրայ կանգնած էին. «Վեր կացէք, քնկուներ, և պատրաստուեցէք արշաւանք գնալու համար:» Թճնդաց բարձր աղազակը և այդ ձայնը ամենի ականջին էլ հասաւ: Օտուարթ և ուրախ բոլորեքեան շարժուեցան և արագ առաջ գնացին: Ուրպէս զի առաւել շուտ կարտդանան շարժուել նոքա թօթափեցին իրանցից ձիւնեղն հագուստը և այժմ կրկին կարելի էր տեսնել հոսող ջրային կաթիլներ: Աաթիլների մի մասը գետինը մտաւ ցրտահար հատիկները ջրելու համար և երբ նոքա խմեցին, կշացան, բաւականին մեծացան և իրանց փոքր և կանաչ գլուխները հանեցին գետնի տակից: Աաթիլների միւս մասը ուղեղ դէպի երկինքը բարձրացաւ, տեղաւորուեցաւ մէծ ամպետիկ երկինքը բարձրացաւ, տեղաւորուեցաւ մէծ ամպետիկ նաւերի մէջ և առազաստաւորուած յառաջ գնաց դէղին նաւերի մէջ

պի աւելի տաք երկիրները, որոնք կարօտով սպասում էին անձնեին: Ի՞այց մեր փոքր ճանապարհորդը ոչ առաջինների թւում էր, որովհետեւ չկամեցաւ թագնուել գետնի մէջ, ոչ երկրորդների, որովհետեւ ճանապարհորդութիւնը, օգային ծովում նորան արդէն ճանձրացրել էր, նա գարձաւ երրորդ կարգի մեծաւորը, որ մեծ երամով գնում էր գաշտիցը խոր ձորերի միջով:

Այս պատերազմասէր կաթիլները կազմեցին մի փլսիրալց առու և ուրախ ուրախ երգում էին. «առաջ համարձակի դէպի ծովը, առաջ դէպի ծովը»: Միանդամից նոքա լսեցին առաւել սասաիկ աղաղակիքան թէ իրանցը, հաղար ձայներէ պատասխաններ մի այլ մեծ առուից, որ ուղեղուուած էր դէպի մի և նոյն կողմը և նոյնպէս երգում էին. «բարի և ուրախ ճանապարհ ձեզ, եղայլների երկու խմբերն էլ միացան և կազմեցին մի հեղեղատ: Լսուեցաւ կարկաչ խշոց և աղմուկ, երբ կաթիլները առաւել շատ տանում էին միմեանց հարցուփորձ էին անում, ծանօթանում էին միմեանց հետ և ուրախանում էին որ վերջապէս տեսնուեցան: Փոքր ճանապարհորդների խումբը լուսպէց լուսպէ մեծանում էր, առաւել և առաւել էր սաստիանում ուղեկիցների թիւը և շատ զարմացան, երբ զոյցաւ մի լայն գետ և հզօր հոսանքը զլորում էր նոցադէպի իւր աղեքները: Մեր կայտառ ճանապարհորդը ուրախութիւնից իւր ընկերների թիկունքների վրայ էր թըռչում և շատպում էր նոցա դէմ եկող շեղ շքեղ հոսանքին: Աս պակաս չուրախացաւ, երբ տեսաւ, որ այսպէս զանազան

առուներից բաղկացած հզօր և թարմիսումբը դէպի ինքն է գալիս և սաստկացնումէ իւր ոյժը: Խսկ կաթիլները հպարտանում էին, որ պատկանում էին այժմ այն ջրերին, որոնց օգնութեամբ կարող էին տանել ամենածանը նաւեր: Երբեմն երեւում էր նոցա թիկունքի վրայ շնութիւնների համար կարած ծանր քարեր բարձած նաւակը որ նոքա այնպէս հեշտութեամբ էին տանում, կարծես թէ թուղթ լինէր. երբեմն զարկում էին նոցա շոգենաւի ակները, ծանրաբեռնուած արկներով և մեծ ու փոքր մարդկանցով և այն ժամանակ կաթիլների բազմութիւնը փլսիրալով և ալեկոծուելով գորգուում էր այդ անախորժ ձնշման տակ: Երբեմն աղմուկ էին հանում կաթիլները, զարնուելով կամրջի քարեւ սիւներին, որ ամուր և հաստատ ձգել էր իւր կամարները հոսանքի ամբողջ տարածութեան վրայ և այնպէս էին երբեմն գոռուում, որ կարծես կամենում էին փորձել շնչքի ամրութիւնը և խորտակել քանդել մարդկային ձեռքի աշխատութիւնը:

Ամէն մէկ վայրկինում մեր կաթիլները նորանոր բաներ էին տեսնում: մեծ ու փոքր քաղաքներ, ջրաղացներ, որոնք բարձրանում էին հեղեղի մէջ իրեւ կղզիներ, ամբարտակներ, որոնց մէջ ընկնում էր մեր ճանապարհորդը, եթէ հեռանում էր մեծ ջրից, բայց նոցա ձեռքից նա հեշտութեամբ ազատվում էր: Ի՞այց ամենաերեւելի տեսարան տեսաւ նա այն ժամանակ, երբ լող տալով մեծ վաճառաշահ քաղաքի մօտից դուրս եկաւ նաւահանգիստը: Եյտեղ երեւում էին զանազան լայն ու նեղ բարձր ու ցած




նաւեր. նա երբէք չէր տեսել այսքան շուտ լող տուողներ, մի և նոյն տեղում կարծես յանկարծ մի կենդանի անտառ դուրս եկաւ ծովի մասին լոյթից, այնքան կայմեր էին վեր ցցուած: Կարմիր ու կապուտ, կանաչ ու սպիտակ գրօշները և դրօշակները ուրախ ուրախ ծածանում էին օգումբ: Ամենայն ազգի և զանազան հագուստներով նաւաստիներ երգում էին, կեր ու խում էին անում և դործում էին նաւի տախտակամածի վրայ, իսկ չորս բոլորքը մեծ կիսաշրջանով կանգնած էին զանգատան պէս բարձր հցյակապ ապարանք-ներ, այնտեղ տանում էին ապրանքի հակերը և ճախարակ-րերով բարձրացնում էին մինչև շնչքի վերին մասերը: Կյա բոլոր տեսնում էր մեր կաթիլը վաճառական նաւի ղեկին նստած: “Նա այստեղ կրմնար ամբողջ շաբաթներով և կրկին բոլոր բաները մի մի չէր կարող տեսնել, բայց երբ մի գեղեցիկ օր այն նաւի նաւաստիները, որի ղեկի վրայ նստած էր մեր կաթիլը, երգեցին նորա երգը. «Էդուց գնալու ենք դէպի ծովը: Օովի փոքրիկ աղջիկը մի սաստիկ ցանկութիւն զբաց, նա կամեցաւ վերադառնալ իւր սիրելի մօր մօտ, որից նա բաժանուած էր մնացել այսպէս շատ ժամանակ: “Նա թռչո-տում էր ուրախութիւնից և անհամբերութիւնից: Երբ սկսեցին ձգել առագաստները և դուրս քաշել խարիսխը, նա տեղաւորուեցաւ ղեկի վերին մասի վրայ և նաւի հետ ու-րախ դէպի ծովը լող տուեց:

Ը ուտով երկիրը անհետացաւ երկու կողմիցն էլ մեծ ու հզօր ալեքները, որոնց առաջ խոնարհում էին փոքր առուների ալեքները, խոնարհում էին այս վերջիններին,

կարծես կամենում էին ողջունել նոցա և տանել հասցնել ծովը, որ այսքան երկար սպասում էր նոցա: Կյատեղ կա-թիլը թռաւ ղեկի վրայից և ընկաւ ուրախ ամբոխի մէջ, որ պատմէ իւր ծովի մէջ մնացած եղայրներին իւր արած Ճանապարհորդութիւնները, իւր բոլոր տեսածն ու լսածը: Իսկ ծովը մութկանաչ շրմ հագած ուրախանում էր, որ իւր որդիքը յետ դարձան, նա պարզեց ձեռքերը և բոլո-րին իւր զիրկը ընդունեց:

Եթու դու պայծառ ամառնային երեկոյեան Ճեմում ևս ծովի ափին և երբ չէ փչում ամենեին քամին, դու կլին լսում ես այն ժամանակ մի մեղմ տրտունջ և մի տեսակ խորհրդաւոր ձայն և շգիտես—թէ որտեղեց է դա դալիս: Բայց լսւ լսիր—այդ կաթիլներն են միմեանց պատմում իրանց արած զարմանալի Ճանապարհորդութիւնները:





Ա. Յ. Ռ. Գ. Ը. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ.

	Վարչ. Գույք
№ 1. Զորս առակ (սակաւաթիւ). . . . .	> 15.
№ 2. Երկրորդ մանկական գիրք . . . . .	> 20.

0004048

№ 3-ր կը լինի

“ԻՆՉՈՎ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԱՐԴԻԿԸ”

(Փոխադրութիւն կամ 1. Տոլսոտից):

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004048

